

17.07.2015 թ

գ. Արգինա

ՀՀ Արմավիրի մարզի Արգինա համայնքի ղեկավարի 2015 թվականի առաջին կիսամյակի աշխատանքային գործունեության վերաբերյալ:

Արգինա համայնքում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի հաշվետու ժողով: Ժողովին մասնակցում էին ՀՀ Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ Արրահամ Մարտիրոսյանը, ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ, գյուղապետարանի աշխատակիցներ:

Նախագահությամբ համայնքի ղեկավար Մ. Գրիգորյանի, Զարտուղարությամբ աշխատակազմի քարտուղար Ա. Հարությունյանի ջեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավար Մ. Գրիգորյանը:

Հարգելի հյուրեր, Արգինա համայնքի բնակիչներ.

Թույլ տվեք ձեր ուշադրությունը հրավիրել իմ՝ համայնքի ղեկավարի, գյուղապետարանի աշխատակազմի կողմից 2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների մասին՝ ըստ համապատասխան բնագավառների:

2015 թվականին անցկացվել են ավագանու չորս նիստեր, որոնց ընթացքում քննարկվել են համայնքին հուզող տարաբնույթ հարցեր, կայացվել որոշումներ և հետամուտ եղել դրանց կայացմանը: 2015 թվականի առաջին կիսամյակի բյուջեի կատարողականը կազմում է հետևյալը.

Հողի հարկ հավաքագրվել է 7259.2 հազար դրամ կամ 96.4% ,գույքահարկ՝ 688.6 հազար դրամ կամ 110.5%, վարձակալած հողի վարձավճար՝ 1310.9 հազար դրամ կամ 126.6% , Տեղական տուրքեր՝ 36.0 հազար դրամ կամ 100%:

Գյուղապետարանի կողմից անցկացվել են անասունների հունվարյան հաշվառումը, ցանքերի մասին հունիսյան հաշվետվությունը, կազմվել և ավագանու հաստատման է ներկայացվել համայնքի հողային հաշվեկշիռը, Արմավիրի մարզպետարան ինչպես նաև տարբեր կազմակերպությունների են ուղարկվել շուրջ յոթանասուն տարբեր բնույթի գրություններ, հաշվետվություններ, անցկացվել է, անհատ անձանց են տրվել ութսունից ավելի տարբեր բնույթի տեղեկանքներ: Շահագործվում է մանկապարտեզը: Մանկապարտեզի շահագործման նպատակով համայնքի բյուջեից ծախսվել է 2360.0 հազար դրամ, որը կազմում է համայնքի վարչական բյուջեի մոտ 20.0%: Այսօր արդեն մանկապարտեզ են հաճախում համայնքի երեսուներկու:

Համայնքի գերեզմանատան շուրջ պարսպապատման նպատակով հայտարարվել է շինարարության մրցույթ՝ սկսվել և ավարտին է հասցվել գերեզմանատան պարսպապատման աշխատանքները:

Համայնքի հինախնդիրներն են՝

Համայնքը չունի մշակույթի տուն, գյուղապետարանի շենք, գազաֆիկացված չէ, անբարեկարգ են մնում համայնքի ներսի փողոցների վիճակը, մեծ թիվ են կազմում արտագնա աշխատանքի մեկնողները:

Արգինա համայնքի ղեկավար Մ. Գրիգորյան



Արգինա համայնքի ղեկավար Մ. Գրիգորյան